


ՍԱՏՆԱԳԻՏԱԳՐՈՒՄ • ՓՈՐՉ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
«03» 09 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արա Անդրանիկի Ավետիսյանի Ը.00.08 - «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի 2024 թ. օգոստոսի 28-ի նիստում (Արձանագրություն թիվ 1):

Նիստին մասնակցում էին Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ ԵՎ.Ա.Բազինյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Շ.Հարությունյանը (գրախոս), տ.գ.թ., դոցենտ Ե.Գ.Մանուկյանը (գրախոս), տ.գ.թ., դոցենտ Վ.Թ.Նալչաջյանը (գրախոս), տ.գ.թ., դոցենտ Ն.Մ.Կետոյանը, տ.գ.թ., դոցենտ Տ.Հ.Հակոբյանը, տ.գ.թ., ավագ դասախոս Լ.Գ.Հակոբյանը, տ.գ.թ., դասախոս Հ.Ռ.Կարապետյանը, տ.գ.թ., դասախոս Գ.Ս.Ասլանյանը, տ.գ.թ., դասախոս Ա.Ռ.Լևոնյանը, տ.գ.թ., դասախոս Ռ.Ա.Ղազարյանը, դասախոս Մ.Հ. Խչեյանը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իրական և ֆինանսական հատվածների միջև փոխառնչությունների գնահատումը, ֆինանսական միջնորդ ընկերությունների՝ տնտեսական աճի վրա ունեցած ինստիտուցիոնալ ազդեցության հետազոտումը, ակտիվների գների, այսպես կոչված «փուչիկների» ճանաչման, չափման և կարգավորողների կողմից արձագանքման հիմնախնդիրների ուսումնասիրությունը խիստ արդիական է հատկապես Հայաստանի փոփոխվող տնտեսական լանդշաֆտի համատեքստում, որը ճշմարտացիորեն կարևորվում է ատենախոսության հեղինակի կողմից:

Ֆինանսական հատվածը առանցքային դեր է խաղում ռեսուրսների բաշխման, ռիսկերի և ներդրումների կառավարման տեսանկյունից: Կենսունակ ֆինանսական հատվածը խթանում է տնտեսական աճը՝ խնայողություններն ուղղելով դեպի արդյունավետ ներդրումներ, խթանելով նորարարությունը և աջակցելով ձեռներեցությանը: Այնուամենայնիվ, դրա ազդեցությունը միշտ չէ, որ դրական է: Ֆինանսական ճգնաժամերը, որոնք հաճախ առաջանում են փուչիկների և համակարգային ռիսկերի պատճառով, կարող են լրջորեն խաթարել տնտեսական աճը՝ հանգեցնելով ռեցեսիայի և երկարաժամկետ լճացման:

Հայաստանում ֆինանսական հատվածի վերջին փոփոխությունները, ինչպիսիք են բանկային ոլորտի աճը և վարկային շուկաների ընդլայնումը, էական ազդեցություն են ունեցել տնտեսական ակտիվության վրա: Սակայն այս փոփոխությունները նաև պոտենցիալ ռիսկեր են բերում հատկապես անշարժ գույքի շուկայում: Հայաստանի անշարժ գույքի ոլորտը զգալի աճ է ապրում՝ պայմանավորված պահանջարկի աճով, օտարերկրյա ներդրումների աճով և վարկավորման բարենպաստ պայմաններով: Թեև սա խթանել է տնտեսական աճը, այն նաև մտահոգություն է առաջացրել այս աճի կայունության և բնակարանային փուչիկի հնարավորության վերաբերյալ: Առկա է մտահոգություն, որ անշարժ գույքի գները կտրված են տնտեսական հիմքերից և սպեկուլյատիվ վարքագծի և վարկավորման չափազանց մեծ աճի պայմաններում փուչիկի ձևավորման ռիսկեր են պարունակում:

Անշարժ գույքի շուկայում տատանումները կարող են ազդել փոխառության կարողությունների, ներդրումային որոշումների և սպառման ձևերի վրա՝ ստեղծելով

հետադարձ կապեր: Արագ աճի ժամանակաշրջաններում դրանք կարող են հանգեցնել ֆինանսական փուչիկների ձևավորմանը: Այս համատեքստում ֆինանսական արքեվերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումը կարևոր է, քանի որ այն վաղ նախազգուշացման և կարգավորող մարմինների կողմից արձագանքման հնարավորություններ է ստեղծում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը իրական մակրոտնտեսական փոփոխականների (մասնավորապես՝ տնտեսական աճի), և ֆինանսական հատվածի միջև փոխառնչությունների, ինչպես նաև ֆինանսական անկատարությունների պայմաններում արքեվերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումն է ՀՀ օրինակով: Ելնելով սահմանված նպատակից, ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների բացահայտմանը վերաբերող տեսական մոտեցումներն ու առավել նշանակալի հետազոտությունները,

- Ուսումնասիրել տնտեսական աճի ինստիտուցիոնալ տեսությունը և հետազոտությունները, գնահատել ֆինանսական ինստիտուտների ազդեցության՝ նշված տեսության շրջանակներում դիտարկելու նպատակահարմարությունը,

- Ուսումնասիրել ակտիվների գնագոյացման, մասնավորապես՝ ակտիվների գների փուչիկների ճանաչման և արձագանքմանն ուղղված տեսություններն ու մոդելները,

- Վերլուծել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների տնտեսական աճերի դինամիկան և վերջիններիս բաշխման վարքագիծը ժամանակի ընթացքում,

- Սահմանել ինստիտուտների (մասնավորապես՝ ֆինանսական) զարգացվածությունը չափող փոփոխականներ և տարբեր երկրների համար վերլուծել վերջիններիս դինամիկան,

- Վերլուծել ՀՀ-ում կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների վրա ազդեցություն ունեցող գործոնները՝ կենտրոնանալով գրավային ապահովվածության դերի վրա,

- Վերլուծել ՀՀ-ում անշարժ գույքի շուկայի գների դինամիկան և վերջինիս վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող գործոնները,
- Գնահատել տնտեսական աճի վրա ինստիտուտների ազդեցությունը՝ կենտրոնանալով ֆինանսական ինստիտուտների վրա,
- Գնահատել Ֆինանսական արբելերատորի միկրոհիմքերի առկայությունը ՀՀ-ում,
- Վիճակագրական մոդելների կիրառմամբ գնահատել ակտիվների գներում փոփոխությունների առկայությունը՝ կենտրոնանալով ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա,
- ՀՀ տնտեսության օրինակով գնահատել ֆինանսական արբելերատորի մեխանիզմի ազդեցությունը իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա,
- Ներկայացնել նշված ազդեցությունների բացահայտումից բխող քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների, մասնավորապես՝ տնտեսական աճի վրա ազեցության բացահայտումն է: Հետազոտության առարկան տնտեսական աճի վրա ֆինանսական հատվածի ազդեցության գնահատումն է ֆինանսական արբելերատորի մեխանիզմի ենթադրությամբ ՀՀ օրինակով:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտությունում հեղինակը կարևորել է ստորև ներկայացված կիրառական գիտական արդյունքները, որոնք իր կողմից գնահատվել են որպես գիտական նորույթ.

- Իրականացվել է երկրների համախառն ներքին արդյունքի վրա ինստիտուտների ազդեցությունը չափող վիճակագրական/էկոնոմետրիկական մոդելների գնահատում, և հիմնավորվել է տնտեսական աճի վրա ինստիտուտների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը,
- Որպես ինստիտուտների առանձին համախումբ՝ գնահատվել է ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը երկրների տնտեսական աճի վրա, և հիմնավորվել է տնտեսական աճի վրա ֆինանսական ինստիտուտների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը,

- ՀՀ բանկային համակարգից ստացված ինֆորմացիայի հիման վրա էմպիրիկ վերլուծության միջոցով միկրոմակարդակում հիմնավորվել է ֆինանսական արքսելերատորի մեխանիզմի առկայությունը ՀՀ ֆինանսական համակարգում,

- Հիմնվելով ՀՀ ֆինանսական համակարգում, որպես արքսելերատորի մեխանիզմի մաս՝ գրավային ապահովվածության ազդեցության գնահատված կարևորության վրա՝ մշակվել/կիրարկվել են անշարժ գույքի գներում փուչիկների վիճակագրական թեստավորման մոդելներ,

- Իրականացվել է ֆինանսական արքսելերատորի և գերիշխող արտարժույթի ենթադրությամբ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելի կալիբրացիա, գնահատվել են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շոկերին համախառն ներքին արդյունքի և այլ մակրոտնտեսական փոփոխականների արձագանքը, և մակրոմակարդակում հիմնավորվել է ՀՀ-ում ֆինանսական արքսելերատորի մեխանիզմի ազդեցության առկայությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառություն գտնել նաև ֆինանսական միջնորդ կազմակերպություններում և մասնավորապես՝ ՀՀ առևտրային բանկերում՝ տնտեսության տարբեր փուլերում վարկավորման որոշումների կայացման և դրա հնարավոր հետևանքների արդյունավետ գնահատման գործընթացներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Աշխատանքի հիմնական դրույքները քննարկվել են ԵՊՀ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի նիստերի ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարությունում, ՀՀ առևտրային բանկերում:

Հետազոտության առանձին արդյունքներ ներդրվել են ՀՀ առևտրային բանկերում:

Աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփվել են թվով 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 143 էջում:

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական նորոյթները, հետազոտության գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունները»** գլխում նախ ներկայացվում են ֆինանսական և իրական հատվածների փոխառնչությունների վերաբերյալ տեսությունները և մոդելները: Վերը նշված փոխառնչությունների համատեքստում մասնավորապես դիտարկվել են ֆինանսական արքսելերատորի մեխանիզմի կիրառմամբ մոդելավորման աշխատանքներ՝ իրականացված տարբեր հեղինակների կողմից և տարբեր տնտեսությունների համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը Համախառն ներքին արդյունքի վրա»** գլխում ֆինանսական և իրական հատվածի փոխառնչությունների ուսումնասիրման նպատակով առաջին քայլով, որպես ազդեցությունները ավելի ավելի մեծ նկարում դիտարկելու առաջնային մոտեցում, ֆինանսական հատվածի դերը ուսումնասիրվել է հենց ինստիտուցիոնալ աճի համատեքստում: Տեսական և կիրառական հետազոտված զարգացման համար իրականացվել է ինստիտուտների ավելի նեղ տարանջատում՝ տնտեսական և քաղաքական ինստիտուտների:

Ատենախոսության երրորդ՝ **«Ֆինանսական արքսելերատոր»** գլխում ներկայացված է ՀՀ տնտեսության օրինակով ֆինանսական արքսելերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումը:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսություն անկա են մի շարք թերություններ, որոնք առավել մանրամասն ներկայացված են ստորև՝

1. Գծապատկեր 2.1.3-ում պարզ չէ՝ ինչպես է կատարվել երկրների ընտրությունը: Որոշ ընտրված երկրներ կապ չունեն հետխորհրդային կամ նախախորհրդային ժամանակաշրջանի հետ, որի կոնտեքստում ուսումնասիրվում են ՀՆԱ ցուցանիշները: Հեղինակը պետք է ավելի հիմնավոր դարձնի վերլուծության այս հատվածը:
2. Աղյուսակ 2.2.1-ում ներկայացված են գծային կոռելյացիայի գործակիցներ այն դեպքում, երբ փոփոխականներից մեկը բինար փոփոխական է, հետևաբար վիճակագրական տեսանկյունից ճիշտ չէ հաշվարկել գծային կորելյացիայի գործակիցը: Անհրաժեշտ է ներկայացնել նաև թե քանի երկիր է ներառված երկու խմբերում՝ 0 և 1՝ ավելի հստակ պատկերացնելու ընտրված երկրների կառուցվածքը:
3. Էջ 56-ում մեկնաբանվում են մոդել 2.2.1-ի պարամետրերի գնահատականները, ըստ որոնց մեկ միավոր էկզոգեն փոփոխականների աճը հանգեցնում է 38% և 26% աճի, որը հետևանք է մոդելի աջ մասի գծային տեսքի: Հեղինակը պետք է քննարկի, թե որքանով են հիմնավոր այս գնահատականները՝ բացատրող փոփոխականների շատ ցածր և շատ բարձր արժեքներ ունեցող երկրների համար:
4. Էջ 57-ում խոսվում է սոցիալիստական իրավական ծագում ունեցող երկրներում մարդու իրավունքների պաշտպանվածության ինստիտուտի ոչ լիարժեք կայացվածության մասին և հնարավոր պատճառ նշվում է «Ստալինյան բռնաճնշումներից մնացած ժառանգությունը»: Անհրաժեշտ է մասնավորեցնել, թե որոնք են այդ երկրները և արդյոք դրանք մեծ մաս են կազմում մոդելում ներկայացված երկրների ցանկում:
5. Լրացուցիչ պարզաբանման կարիք ունի նաև նախորդ մոդելի համեմատ պանելային մոդելի դեպքում Սեփականության իրավունքի պաշտպանվածության ինդեքսի աճը հանգեցնում է 63%-ի՝ նախորդ մոդելի 38%-ի համեմատ: Այս տարբերությունը զգալի է, ուստի հեղինակը պետք է բացատրի պատճառները:

6. Աշխատանքի 2.1. «Տնտեսական աճի ինստիտուցիոնալ նախադրյալները. քաղաքական և տնտեսական ինստիտուտներ» ենթակետում արված վերլուծությունը չի ամփոփվում ՀՀ-ի համար արված եզրահանգումներով: Գնահատական չի տրվում, թե արդյոք ՀՀ-ում գործում են «այնպիսի ինստիտուտներ, որոնք ճնշում են տնտեսական աճը», թե ՀՀ-ում ներդրված են «աճին նպաստող սոցիալական կարգավորումներ»:

7. Էջ 66-ի գծապատկեր 2.3.3-ում տոկոսադրույքի սփրեդի որոշ արժեքներ բացասական են՝ ընդ որում՝ չափազանց փոքր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ով երկրների համար: Հեղինակը պետք է ստուգի տվյալների բազան և եթե իրականում նման դիտարկումներ կան, ապա առանձին պարզաբանի այդ երկրների տվյալները. հակառակ դեպքում ամբողջ վերլուծությունը պետք է կրկնել տվյալների բազան մաքրելուց հետո:

8. Տարածական տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն մոդելի եզրակացությունները առևտրային բանկերի քանակի և ՀՆԱ-ի աճի կապի մասին հիմնավոր չեն: Վերլուծության արդյունքները ընդամենը փաստում են, որ ավելի մեծ եկամուտ ունեցող երկրներում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելի շատ է, կամ այլ կերպ ասած՝ բանկային ծառայություններն ավելի հասանելի են: Կատարված եզրակացության համար առնվազն անհրաժեշտ էր ուսումնասիրել տնտեսական աճի և առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի փոփոխությունների միջև կապը: Ավելին, ընդամենը հաջորդ քայլում, պանելային վերլուծության մոդելների կիրառումը հանգեցրել է հակառակ եզրակացության, որը կրկին հիմնավոր մեկնաբանված չէ: Հեղինակը նման իրավիճակը պայմանավորել է օնլայն բանքինգի զարգացմամբ, որը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ առնվազն ներկայացնելու դիտարկված երկրներում թվային բանքինգի զարգացման տեմպերը 2010-2018 թվականների համար: Նման արդյունքների հնարավոր պատճառ կարող էր լինել համեմատվող մոդելներում ոչ ամբողջովին համընկնող երկրների ներառումը:

9. Էջ 76-ում նշված է 6,220 հայկական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների կիրառման մասին, սակայն տվյալների աղբյուրը նշված չէ:

10. Գծապատկերներ 3.1.1-3.1.6-երը ներառում են երեք տարվա համար երկուական ցուցանիշներ, որոնց հիման վրա կորելացվածության հիմնավորում է արվել: Որպես ժամանակային շարքեր այս ցուցանիշների երկարությունը բավարար չէ՝ կոռելացվածության մասին խոսելու համար:

11. «Փոքր» համարվող ընկերությունները, որոնք կազմում են վերլուծության ընտրանքի գերակշիռ մասը՝ 61%-ը, ունեն 0-10 գրանցված աշխատող: Պարզ չէ թե ինչ է նշանակում 0 գրանցված աշխատող ընկերություն ունեցող կազմակերպություն: Իրականում գերփոքր ընկերություններ են, ինչն ակնհայտ երևում է նաև գծապատկեր 3.1.2-ից, ըստ որի փոքր ընկերությունների հիմնական միջոցները կազմում են ընդամենը 40,000-60,000 դրամ: Էջ 84-ում ներկայացված մոդելում հիմնական միջոցների տարեկան տարբերությունը ներկայացվում է որպես կազմակերպությունների ներդրումային որոշումների համար որպես չափվող փոփոխական, սակայն ըստ գծապատկերի փոքր կազմակերպությունների համար միջինացված հիմնական միջոցների տարեկան տարբերությունը կազմում է երեք տարում առավելագույնը 15,000 ՀՀ դրամ, ինչը համարել որպես տարեկան ներդրում՝ խնդրահարույց է:

12. Հեղինակը պետք է հիմնավորի արդյոք կազմակերպությունների այս ընտրանքը ներկայացուցչական է հանդիսանում ՀՀ տնտեսությունը բնութագրելու համար՝ մինչև ֆինանսական արտելերատորի վերաբերյալ եզրակացություններ անելը:

13. Էջ 102-ում որպես բնակարանների գների տվյալների աղբյուր հեղինակը նշել է armstat.am կայքը, ընդ որում տվյալները ներկայացնում են Երևան քաղաքի անհատական բնակարանների գնի և այլ հեղոնիկ գործոններ՝ ըստ Երևանի վարչական շրջանների: Հեղինակը պետք է պարզաբանի արդյոք ՀՀ Վիճակագրական կոմիտեն հավաքագրում և հրապարակում է Երևան քաղաքում անշարժ գույքի վաճառքի անհատական գործարքներ, թե ոչ:

14. Նախքան անշարժ գույքի գնի վերաբերյալ ռեգրեսիոն մոդելի կառուցումը պետք է իրականացվեր տվյալների նկարագրական վիճակագրական վերլուծություն՝ ներկայացնելու համար նշված փոփոխականների հիմնավորվածությունը: Խոսքն այն մասին է, որ կիրառված ընտրանքը

բավականին փոքր է՝ 220 և պետք է հիմնավորել արդյոք այն ներկայացուցչական է համարվում Երևանի համար՝ վարչական շրջանների ներգրավվածության առումով:

15. Անշարժ գույքի գների վերլուծության ժամանակ ընդունված է կիրառել մեկ քառակուսի մետրի գինը, սակայն աշխատանքում հեղինակը որպես կախյալ փոփոխական կիրառել է բնակարանների ամբողջ գինը: Վերջնական ռեգրեսիոն մոդելում մնացել են Մակերես, Էլիտար փոփոխականները և չորս վարչական շրջանները բնութագրող փոփոխականները՝ ենթադրելով որ մնացածների միջև չկան գնային տարբերություններ, ինչը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

16. Աշխատանքի գրականության ցանկում ներառված է list.am կայքը, որի վերաբերյալ աշխատանքում բացակայում է հղում, թե ինչ նպատակով է հեղինակը կիրառել այս աղբյուրը: Եթե պարզվի, որ անշարժ գույքի անհատական բազան հավաքարվել է այս աղբյուրից ապա անշարժ գույքի գների վերաբերյալ կատարած վերլուծությունները և եզրահանգումները կորցնում են իրենց արժանահավատությունը, քանի որ list.am անշարժ գույքի հայտարարությունները չեն հանդիսանում անշարժ գույքի վաճառքի իրական գործարքներ:

17. Աշխատանքի 3.3. ենթակետում ներկայացված է DSGE մոդելը: Մոդելն աշխատանքի հեղինակին չի պատկանում, որևէ լրամշակումներ մոդելի պայմանների առումով առկա չեն: Չի նշված նաև, թե ինչով է հիշյալ մոդելը տարբերվում ՀՀ-ում նմանատիպ մոդելներ կառուցող և գնահատող այլ կառույցների, օրինակ՝ ՀՀ ԿԲ-ի մոդելներից: Եթե 3.3 ենթակետում ներկայացված մոդելը որևէ յուրահատկություններ/լրամշակումներ արված ատենախոսի կողմից չունի, ապա հեղինակի հետազոտական աշխատանքը կայանում է մոդելի միջոցով մինչև 2020 թվականը ներառող տեղեկատվության հիման վրա արդյունքների գնահատման մեջ, ինչը բավարար գիտական նորույթ չի պարունակում:

18. Բացի այդ COVID-19 համավարակը մեծ ազդեցություն է թողել ամբողջ աշխարհում և Հայաստանում տնտեսության թե՛ իրական և թե՛ ֆինանսական հատվածի վրա: Այն նաև հետ-համաճարակային մեծ շոկեր է առաջացրել: Հետևաբար, կասկածելի է 2020 թվականի ազդեցությունների հետևանքը կրող 2021-2023 թվականների տեղեկատվությունը բացառող և 2019 (2020)

թվականներով կոլիբրացիա արված մոդելի արդյունքների կիրառելիությունը ներկայիս ՀՀ տնտեսության պատկերը բացատրելու կամ որևէ կերպ կիրառելու պարագայում:

19. Աշխատանքում օգտագործված վիճակագրական շարքերը բավականաչափ հին են. երկրորդ գլխում կատարված ռեգրեսիոն վերլուծություններում հեղինակի կողմից ամենաթարմ տվյալը վերագրվում է 2018 թվականին, երրորդ գլխում արված վերլուծությունն ընդգրկում է 2010-2019 (2020) թվականները, մինչդեռ օգտագործվող բոլոր ցուցանիշների համար հասանելի են նույնիսկ 2023 թվականի տվյալները:

20. Վիճակագրական թեստերի արդյունքների ամբողջական ներառումը տեքստում լիովին ավելորդ է: Դրանք կարող են ներկայացվել Հավելվածներում: Այդպիսիք են օրինակ՝ էջ 67, աղյուսակ 2.3.2 - Ռևյաթի թեստի արդյունքների ներկայացումը կամ՝ էջ 71, աղյուսակ 2.3.3 – Հաուսմանի թեստի արդյունքները և այլն:

21. Բոլոր գծապատկերները պետք է դարձնել հայատառ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արա Անդրանիկի Ավետիսյանի «Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, սակայն վերոնշյալ դիտողություններն ըստ էության նվազեցնում են աշխատանքի գիտահետազոտական բաղադրիչը:

Այսպիսով, Արա Անդրանիկի Ավետիսյանի «Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա» թեմայով թեկնածուական ատենախոսությունը մասամբ է համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Հետևաբար, Արա Անդրանիկի Ավետիսյանի «Ֆինանսական հատվածի ազդեցությունը տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսությունը Ը.00.08 -

«Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման հարցը կարող է որոշվել մասնագիտական խորհրդի քննարկման արդյունքում:

Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ. գ. թ., դոցենտ

Ե. Ա. Բազինյան

Գրախոս՝
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի տ.գ.թ., դոցենտ

Կ. Շ. Հարությունյան

Գրախոս՝
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի տ.գ.թ., դոցենտ

Ե. Գ. Մանուկյան

Գրախոս՝
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի տ.գ.թ., դոցենտ

Վ. Թ. Նալչաջյան

Ստորագրությունները հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար

Ե. Պալանյան
03.09.2024

Ն. Հ. Դարբինյան